Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2019 թ.
մարտի 1 -ի N 36 - Ա
որոշման

Ամերիկայի Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի կողմից
2019 թ. իրականացվելիք սոցիալական

Բ Ա Ր Ե Գ Ո Ր Ծ Ա Կ Ա Ն   Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի անմիջական նպատակը | Բարձր սոցիալական ռիսկի խմբի՝ բռնության ենթարկված, անապաստան, լքված, կրթությունից և այլ հանրային ծառայություններից դուրս մնացած, վարքային և հոգեհուզական խնդիրներով, երեխաների համար «ճգնաժամի միջամտության» ծառայությունների մատուցում երկու ճանապարհով՝<br>1) ներկենտրոնային - կենտրոնում այդ երեխաների ժամանակավոր ապաստանում, խնդիրների կարգավորում և վերադարձ ընտանիք և (կամ) վերատեղավորում<br>2) արտակենտրոնային - «Թեժ գիծ» ծառայության կամ ոստիկանության ու այլ մարմինների կողմից ստացված ահազանգերի առնչությամբ սոցիալ-հոգեբանական աջակցության ծառայությունների տրամադրում դժվար իրավիճակում հայտնված երեխաներին՝ անմիջապես նրանց ընտանիքում՝ կոնկրետ համայնքում |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի բարեգործական ծրագրի շրջանակներում նախատեսվող մասնագիտական ծառայությունների մատուցման, սննդամթերքի, հագուստի, գրենական պիտույքների, սանիտարատեխնիկական պարագաների գնման, ընթացիկ վերանորոգման, ինչպես նաև էլեկտրաէներգիայի, գազի, ջրի, կապի ծառայությունների համար ակնկալում ենք ԱԱՀ-ից ազատում: |
| 3. | Բարեգործը | Ամերիկայի Հայ օգնության ֆոնդ, Նյու Յորքի գրասենյակ |
| 4. | Ծրագրի կատարողը | «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամ,<br>հասցեն՝ քաղ. Երևան, Կ.Ուլնեցու 64, ՀՎՀՀ 01009295 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնազավառը | Իրականացման վայրը՝ քաղ. Երևան և ՀՀ բոլոր մարզեր<br>Բնագավառը՝ սոցիալական, հոգեբանական և սոցիալ-մանկավարժական աջակցություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 122 450 744 դրամ: Միջոցներն ստացվելու են ԱՄՆ-ի ՀՕՖ-ի Նյու Յորքի գրասենյակից: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարձր սոցիալական ռիսկի խմբի՝ թափառաշրջիկ, աղքատ, անապահով, մուրացիկ, անապաստան, խնամազուրկ, լքված, |

| | | |
|---|---|---|
| | | բռնությունների զոհ, կրթությունից դուրս մնացած, օրենքի հետ կոնֆլիկտի մեջ գտնվող, վարքային խնդիրներ ունեցող երեխաները և նրանց ընտանիքները, որոնք արագ միջամտության և աջակցության կարիք ունեն և կենտրոն են ուղղորդվում ՀՀ ոստիկանության անչափահասների բաժանմունքի (կնքված պայմանագրի համաձայն), ինչպես նաև Երեխաների պաշտպանության մարզային բաժինների, համայնքային խնամակալության հանձնաժողովների, կրթական հաստատությունների, պետական և հասարակական այլ տարբեր ատյանների կողմից (ստորագրված համաձայնագրերի համաձայն):<br>Շահառուների թիվը՝<br>Ներկենտրոնային ծառայությունների շրջանակներում կսպասարկվի մոտ 300 երեխա և առնվազն 200 ծնող:<br>Արտակենտրոնային ծառայությունների շրջանակներում կսպասարկվի մոտ 1500 երեխա և ավելի քան 1000 ծնող/խնամող:<br>Կենտրոնի ծրագրերում ընդգրկված երեխաները/ընտանիքները կստանան իրենց կարիքներին համապատասխան՝ ԵԱԿՀ-ի կողմից տրամադրվող բոլոր ծառայությունները:<br>Ակնկալվում է, որ տարվա ընթացքում ծառայություններ կստանան մինչև 3000 շահառուներ: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը և (կամ) սկիզբը, ավարտը | 01.01.2019թ. - 31.12.2019թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցառումների ծավալը | Արագ միջամտության և աջակցության կարիք ունեցող երեխաների սոցիալական, հոգեբանական, բժշկական, սոցիալ-մանկավարժական և մասնագիտական այլ աջակցության, խնամքի և օգնության կազմակերպում՝ ապաստանման, թեժ գիծ, արտակենտրոնային, խնամատարության ծառայությունների միջոցով: Այդ երեխաներից՝ առավել բարձր ռիսկի ներքո և կյանքի ու զարգացման համար վտանգավոր պայմաններում գտնվողները ժամանակավորապես ապաստանվում են կենտրոնում և ստանում 24-ժամյա խնամք, պաշտպանություն, սոցիալ-հոգեբանական, առողջապահական, իրավական ծառայություններ, իսկ ոչ այնքան վտանգավոր պայմաններում, սակայն դարձյալ բարձր ռիսկի ներքո գտնվողները կենտրոնից աջակցություն են ստանում անմիջապես իրենց համայնքում և ընտանիքում:<br>Աջակցությունը ներառում է երեխայի/ընտանիքի իրավիճակի բազմամասնագիտական գնահատում, անհատական աշխատանքի պլանի ստեղծում, միջամտության պլանի ստեղծում և իրագործում:<br>Ծառայությունները մատուցվելու են երկու մոտեցմամբ՝ ներկենտրոնային՝ 24-ժամյա ապաստանման և արտակենտրոնային՝ անմիջապես երեխայի ընտանիքում:<br>Ներկենտրոնային ծրագրի շահառու երեխաներն ստանում են ծառայությունների ամբողջ փաթեթը՝ խնամք (հիգիենա, սնունդ), սոցիալ հոգեբանական աջակցություն, առողջապահական (տեղում կամ ստացիոնոր բուժ. հաստատությունում), կրթական, մշակութային, մասնագիտական կողմնորոշման աջակցություն, թերապևտիկ ծառայություններ՝ հաղթահարելու բռնարարքների, լքումների և այլ վնասող վերաբերմունքի պատճառով առաջ եկած տրավմաները երեխաների մոտ: Այս ծրագրի շրջանակներում ծառայությունների մատուցումը տևում է միջինը մեկ ամիս, սակայն անհրաժեշտության դեպքում՝ խնդրի յուրահատկություններից և երեխայի/ընտանիքի կարիքներից ելնելով, մինչև 6 ամիս և ավելի:<br>Արտակենտրոնային ծառայությունների միջոցով երեխան/ընտանիքն սպասարկվում են տեղում, իրենց ընտանիքում և համայնքում, մասնագետներն այցելում են երեխայի ընտանիքին: Այս դեպքում երեխան ստանում է, իր կարիքներին համապատասխան, բոլոր վերը հիշատակված ծառայությունները, բացի ապաստանումից և խնամքի ծառայություններից: |

| | | |
|---|---|---|
| | | Մասնագետները տեղում համախմբում են բոլոր այն կառույցները և ծառայությունները, որոնք առնչվում են տվյալ ընտանիքի հետ, կազմակերպում դեպքերի քննարկումներ՝ օգնելու երեխային/ընտանիքին՝ հաղթահարելու ստեղծված ռիսկային իրավիճակը: Սոցիալ-հոգեբանական խորհրդատվություն ստանալու համար երեխաները/ծնողները 3-6 ամիս տևողությամբ կապ են պահպանում կենտրոնի հետ՝ հեռախոսային կամ այցելությունների միջոցով:<br>Երեխաները կենտրոն են ուղղորդվում ՀՀ բոլոր բնակավայրերից, առանց տարածքային սահմանափակումների:<br>Ծախսերը ներառում են երեխաների խնամքի, հիգիենայի, սննդի, հագուստի, առողջապահական, կրթական, օրվա զբաղմունքի կազմակերպման, շենքի պահպանության, կոմունալ-կենցաղային և այլ տնտեսական, ինչպես նաև խնամող, մասնագիտական, ադմինիստրատիվ և սպասարկող անձնակազմի աշխատավարձերն ու սահմանված հարկերը:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը 2019թ. համար կազմելու է 122 450 744 ՀՀ դրամ, որը ըստ եռամսյակների բաշխվելու է հետևյալ կերպ՝ առաջին եռամսյակ՝ 30 612 686 դրամ, երկրորդ եռամսյակ՝ 30 612 686 դրամ, երրորդ եռամսյակ՝ 30 612 686 դրամ և չորրորդ եռամսյակ՝ 30 612 686 դրամ:<br>Գումարը բաշխվելու է ըստ հետևյալ ծառայությունների և աշխատանքների՝<br>**1.Սնունդ 9 000 000 դրամ**<br>**2.Բժշկական սպասարկում/դեղորայք/ և հագուստի ձեռքբերում 2 000 000 դրամ**<br>**3.Կոմունալ ծառայություններ 8 670 376 դրամ**<br>**4.Հաշվապահական և աուդիտորական ծառայություն 5 456 000 դրամ**<br>**5.Շահառուների սպասարկմանն անհրաժեշտ տրանսպորտային ծառայություն՝ 4 000 000 դրամ**<br>**6. գրասենյակային պիտույքներ 1 000 000 դրամ**<br>**7.Շահառուների հետ տարվող խնամքի և սոցիալ-հոգեբանական աշխատանքներ (մասնագետների աշխատավարձ) 68 500 000 դրամ**<br>**8.Վարչական աշխատակազմի ծախսեր՝ 9 700 000 դրամ**<br>**9.Մասնագիտական աշխատակազմի վերապատրաստման ծախսեր 3 670 000 դրամ**<br>**10.ՀՀ Ոստիկանություն կողմից իրականացվող ծառայություն՝ 7 978 368 դրամ**<br>**11.Կապի ծառայություն 976 000 դրամ**<br>**12. Շենքի պահպանման/սպասարկման ծախսեր 1 500 000**<br>Բոլոր վերոնշյալ ծախսերը կատարվելու են «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի շահառու երեխաների համար: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ակնկալում ենք 2019 թ. հունվարի 1-ից մինչև 2019 թ. դեկտեմբերի 31-ը ԱԱՀ-ից ազատում հետևյալ կազմակերպությունների/ծառայությունների գծով՝<br><br>1. «Հայաստանի Էլեկտրական ցանցեր» ՓԲԸ «Հյուսիս» մասնաճյուղ, քաղ. Երևան, Քոչար 13ա, ՀՎՀՀ 01520882, պայմանագիր N 222226, կնքված 06.08.2008թ. համաձայնագիր առ 26. 08. 2015թ., պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար -3 500 000 դրամ<br><br>2. «Հայ Ռուսգազարդ» ՓԲԸ, քաղ. Երևան, Չարենցի 141ա, |

| | | |
|---|---|---|
| | | ՀՎՀՀ 00046317, 07.07.2013թ կնքված պայմանագիր N 013.08.13.0948,<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար -4 000 000 դրամ<br><br>3. «Վեոլիա ջուր» ՓԲԸ քաղ.Երևան, Աբովյան 66ա,<br>ՀՎՀՀ 02655115, երկկողմ պայմանագիր՝ կնքված 02.11.2017թ.<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար -1 000 000 դրամ<br><br>4. «Վեոն Արմենիա» ՓԲԸ, քաղ. Երևան, Ահարոնյան 2,<br>ՀՎՀՀ 02500052, երկկողմանի պայմանագիր,<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար - 96 000 դրամ<br><br>5. «Թամարա» ՍՊԸ, ՀՀ Կոտայքի մարզ, քաղ. Աբովյան,<br>ՀՎՀՀ 03500525, պայմանագիր՝ կնքված է 29.11.2016թ.<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար-1 500 000 դրամ<br><br>6. «Դավիթ 84» ՓԲԸ, քաղ. Երևան, Դրոյի 22/1,<br>ՀՎՀՀ 00833046, պայմանագիր՝ կնքված 26.11.2014թ., համաձայնագիր առ 27. 11. 2018թ.<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար -1 000 000 դրամ<br><br>7. «Գրանդ Քենդի» ՍՊԸ, քաղ. Երևան, Մասիսի 31,<br>ՀՎՀՀ 02226764, պայմանագիր՝ կնքված 22.04.2016թ.<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար-1 500 000 դրամ<br><br>8. «ՓրայսուոթերհաուսԿուպերս Արմենիա» ՍՊԸ, քաղ. Երևան, Հյուսիսային պողոտա 1, N 17<br>ՀՎՀՀ 02588296, հաշվապահական հաշվառման ծառայությունների մատուցման N FAAS/05/16 նամակ համաձայնագիր,<br>կնքված 01.05.2016թ, նամակ-համաձայնագրի N 3 հավելված առ 06. 11. 2018թ.<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար՝ 4 896 000 դրամ<br><br>9. «Էյվիսի քոնսալթինգ ընդ աուդիտ» ՍՊԸ, քաղ.Երևան, Նուբարաշեն 10 փող., տուն6, ՏԳՀ՝ քաղ. Երևան, Մյասնիկյան պող., 5/1,<br>ՀՎՀՀ 00433357, աուդիտորական ծառայությունների մատուցման պայմանագիր N 30 առ 21.11.2018թ.,<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար՝ 560 000 դրամ<br><br>10. «Էյ-Ի-Ջի-Սերվիս», քաղ. Երևան, Աղոնցի 10,<br>ՀՎՀՀ 00930884, 09.04.2010թ. պայմանագիր N Ե-1118, համաձայնագիր N 9/Ե-1118, առ 27.11.2018թ. |

| | | |
|---|---|---|
| | | պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար՝ 170 376 դրամ<br><br>11. ՀՀ ոստիկանություն, քաղ. Երևան, Նալբանդյան 130, ՀՎՀՀ 01533334, 08.01.09թ. կնքված ծառայությունների վճարովի մատուցման պայմանագիր թիվ 01/09 և կից համաձայնագրեր՝ առ 01.03.2010թ. և 07.11.2018թ.<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար՝7 978 368 դրամ<br><br>12. «Յուքոմ» ՍՊԸ, քաղ. Երևան, Սայաթ Նովա 40/1,<br>ՀՎՀՀ 00024873, պայմանագիր N 023/27/112012՝ կնքված 27.11.2012թ.,<br>կից N 1 հավելվածի համաձայնագիր առ 19. 05. 2016թ.<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար՝ 800 000 դրամ<br><br>13. «Յուքոմ» ՍՊԸ, քաղ. Երևան, Սայաթ Նովա 40/1,<br>ՀՎՀՀ 00024873, բաժանորդային պայմանագիր No 3425591՝ կնքված 10.10.2016թ,<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար 80 000 դրամ<br><br>14. «ՊԱՏՐՈՆ ՌՄ» ՍՊԸ, քաղ. Երևան, Հանրապետության 62/133,<br>ՀՎՀՀ 00861057, Պայմանագիր՝ կնքված 10.10.2013թ., կից համաձայնագիր առ 27. 11. 2018 թ.<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար՝ 500 000 դրամ<br><br>15. «ԴՈՔՍ ՔՈՄՊՅՈՒՏՐ» ՍՊԸ, քաղ. Երևան, Պռոշյան 11/5,<br>ՀՎՀՀ 04718853, պայմանագիր՝ կնքված 02.11.2015թ., համաձայնագիր կնքված 19. 11. 2018թ.<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար՝ 500 000 դրամ<br><br>16. «Լազուռա» ՍՊԸ, քաղ. Երևան, Սաքարիա Քանաքեռցու 117-43,<br>ՀՎՀՀ 00077712, պայմանագիր՝ կնքված 09.11.2015թ., համաձայնագիր կնքված 19. 11. 2018թ.<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար՝ 1 000 000 դրամ<br><br>17. «Ջիմեզ» ՍՊԸ, քաղ. Երևան, Անդրանիկի 149/2<br>ՀՎՀՀ 01848326, պայմանագիր՝ կնքված 22.11.2018թ.,<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար՝ 800 000 դրամ<br><br>18. «Սիթի» ՍՊԸ, քաղ. Երևան, Օհանովի փ. 15/1<br>ՀՎՀՀ 01282006, պայմանագիր՝ կնքված 26.11.2018թ.,<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար՝ 1 000 000 դրամ |

| | | |
|---|---|---|
| | | 19. «Ֆլեշ» ՍՊԸ, քաղ. Երևան, Կողբացու 30<br>ՀՎՀՀ 01808789, պայմանագիր թիվ 194/18՝ կնքված 26.11.2018թ.,<br>պայմանագրի գինը 01.01.2019թ.-31.12.2019թ. համար՝ 800 000 դրամ |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը կկազմեն 18 632 000 դրամ կամ ծրագրի ընդհանուր արժողության 15.22%-ը: Կազմակերպական ծախսերը ներառում են կապի ծառայությունների /976 000 դրամ/, հաշվապահական և աուդիտորական ծառայությունների /5 456 000 դրամ/, գրասենյակային պիտույքների /1 000 000 դրամ/, շինության պահպանման և սպասարկման ծախսեր /1 500 000 դրամ/ և վարչական աշխատակազմի աշխատավարձի /9 700 000 դրամ/ համար նախատեսված ծախսեր |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կառույցների/ կազմակերպությունների հետ | ՀՀ ոստիկանություն, ՀՀ կրթության և գիտության նախարարություն, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Երեխաների իրավունքների պաշտպանության մարզային բաժիններ, համայնքային խնամակալության հանձնաժողովներ, միջազգային կազմակերպություններ, ՀԿ-ներ և այլն |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Վերահսկողությունն իրականացվելու է ՀՕՖ-ի Նյու Յորքի և հայաստանյան գրասենյակների, «Երեխաների աջակցության կենտրոն» հիմնադրամի խորհրդի կողմից, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված՝ բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ — Տ. ԱՎԻՆՅԱՆ